ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահի և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի օգնականի՝ Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցի (ICPEN)՝ Լեհաստանի նախագահության ներքո կազմակերպվող համաժողովին և բարձր մակարդակի հանդիպմանը մասնակցելու նպատակով 2024 թվականի մայիսի 6-ից 10-ն ընկած ժամանակահատվածում Լեհաստանի Հանրապետության Գդանսկ քաղաք գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակցի անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

Գեղամ Գևորգյան - Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) նախագահ,

Աստղիկ Բաղրամյան – Հանձնաժողովի անդամի օգնական:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Լեհաստանի Հանրապետություն, քաղաք Գդանսկ, 2024 թվականի մայիսի 6-ից 10:

3. Գործուղման հիմքը.

Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցի (ICPEN)՝ Լեհաստանի նախագահության ներքո կազմակերպվող համաժողովին և բարձր մակարդակի հանդիպմանը մասնակցության հրավեր:

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցի (ICPEN)՝ Լեհաստանի նախագահության ներքո կազմակերպվող համաժողովին և բարձր մակարդակի հանդիպմանը և տարբեր երկրների ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպումների՝ խթանելու նշված միջազգային ցանցին Հանձնաժողովի անդամակցության գործընթացը:

5. Գործուղման արդյունքները.

- Ապահովվել է մասնակցություն Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցի տարեկան համաժողովին և բարձր մակարդակի հանդիպմանը:
- Հանձնաժողովի նախագահը հանդես է եկել ելույթով բարձրաստիճան ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկմանը՝ ներկայացնելով մարդկային ռեսուրսների և կիրարկման գործիքակազմերի կառավարման հայաստանյան փորձը:
- Հանձնաժողովի նախագահը հանդես է եկել ելույթով շուկայում գործ պատկերների դրսևորումների և դրանց դեմ պայքարի արդյունավետ միջոցների վերաբերյալ պանելային քննարկման շրջանակում:
- Հանձնաժողովի անդամի օգնականը ելույթ է ունեցել Agency Effectiveness խորագրով պանելային քննարկման շրջանակում՝ ներկայացնելով Հայաստանի

Հանրապետության կողմից Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցի գործընկերության արդյունքում տեղի ունեցած դրական տեղաշարժերը և հետագա համագործակցության հետ կապված ակնկալիքները:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ

- Լեհաստանի մրցակցային մարմնի հետ ձեռք է բերվել հետագա համագործակցությունը խորացնելու պայմանավորվածություն:
- Ձեռք են բերվել պայմանավորվածություններ Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցի անդամ պետությունների հետ սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լավագույն փորձի փոխանակման վերաբերյալ:
- Ձեռք են բերվել պայմանավորվածություններ Հանձնաժողովի՝ Սպառողների իրավունքների պաշտպանության և օրենքի կիրարկման միջազգային ցանցին անդամակցելու վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամի
օգնական՝ **Ա. Բաղրամյան**

16.05.2024թ.